

ՔՈՒԶԱԿԵԱՆ ԱՆՏԻՊ ՏԱՂԵՐ

(Շար.)

Գիշեր ու ցորեկ կուլամ, չի դադարիր աչերս ի լալու (1).

Իմ եարն ի ծոցուս ելեր ու երես գրքեր գընալու.

Ձեռքունքս ալ ի յինք տարի բռնելու ու թող չըտալու (2).

Չերդու՞ն ի բերանն էա՞ն՝ «Գընալո՛ւ եմ, չեմ՝ կենալու» (3):

Գիշեր ու ցորեկ կուլամ, աչքերս լալէն չեն դադարիր.

Ի՞՞մ եարս ծոցէս ելեր՝ կը պատրաստուէր ձեկնելու.

Ձեռքերս անոր երկնցուցի որ բռնեմ զայն ու թող չտամ,

Բայց երդումով ըսաւ ինձի՝ «Պիտի երթամ, չեմ կենար»:



Մահալօքս ի վար կուգի ճուղումուկ հաղար սոխախով (4),

Լուք եարս ալ իմ դէմ ելաւ ու բարով երես շօհրաթով.

Բռնեցի ու պինդ պագի ջուխտ երեսըն խիստ կարօտով.

Կ'երթար ու լալով կ'ասէր թէ ի խնդք եղանք ցորեկով:

Մեր թաղէն վար կուգայ ծուռուճուռ հաղար փողոցով,

Ի՞՞մ եարս ալ դէմս ելաւ ու վայելչօրէն զիս բարեւեց.

Բռնեցի ու խիստ կարօտով երկու երեսն ուժով պագի.

Հեռացաւ ու լալով կ'ըսէր՝ «Օր ցորեկով խաղք եղանք»:

(1) Ա. օրինակ (Տէվէճեանի ձեռագիր) Բ. շարք, չի դադարիր, ~~ի~~ օրինակ (Գիւրտեանի ձեռագիր) երկրորդ շարք, չի կտրիր:

(2) Բ. բ. Ձեռնկունքս ալ ի յինք տարայ, բռնելու եմ չեմ թողելու:

(3) Ա. բ. ի բերանն աւեր, Բ. բ. ի բերանն էա՞ն՝ գնալու եմ ու չեմ կենալու: Այս քառեակին մէկ փոփոխակը հրատարակուած է արդէն՝ քիչ տարբերութեամբ՝ Նախապետ Քուչակի դիւանին մէջ:

(4) Այս քառեակը և յաջորդ երկուքը քաղած ենք Տէվէճեանի օրինակութեանց տեւ-

րին մէկ ուրիշ մասէն ուր անոնք դրուած են իբր ատանձին տաղաշարք՝ «Տաղ սիրոյ» տիտղոսով: Երրորդ տողին մէջ ձեռագիրն ունի բ. երեսն. *ենթադրեցինք որ երգողը ջուխտ բառը գործածած ըլլալու էր հող, որովհետեւ երկու բառը երկաւանկ է և երկրորդ հատածին վրայ աւելորդ վանկ մը կը մտցնէ:* Այս քառեակը հրատարակուած է արդէն Նախապետ Քուչակի դիւանին մէջ՝ քիչ տարբերութեամբ, երրորդ տողը հոն սապէս է գիրկ ածի ու պինդ պագի զիր աչերըն խիստ կարօտով:

★

Տեսայ իմ հոգւս հոգին զարդարեր ու կ'երթար ի ժամ՝
 Ես ալ ի դիմացն ելայ, «Ո՛ւր կ'երթաս, 4 ո ժամն է հարամ» (5),
 Եկո՛ ինձ պաքիկ մի տուր, քեզ համար ես կանգնիմ ի ժամ,
 Ազօթք աղաչանք անեմ, մինչեւ քո ծոցուդ (6) տիրանամ (7):

Տեսայ իմ հոգւոյս հոգին որ զարդարուեր ու եկեղեցի կ'երթար,
 Ես ալ դիմացը ելայ, «Ո՛ւր կ'երթաս, քո եկեղեցի երթալդ հարամ է,
 Եկուր ինձի համբոյր ձը տուր, քեզի համար ես երթամ եկեղեցին,
 Ազօթք աղաչանք րենձ՝ մինչեւ որ ծոցիդ տիրանամ»:

★

Ես սրղայ ու դուն տըղայ, սիրուելու (8) ատենն է հիմայ,
 Մէջկունքդ է աղեղ նըման, քանի յիս քաշեմ նա կուգայ (9),
 Քո ծիծդ է խաղող նըման, որ առեր կրծոցդ ի վերայ (10),
 Ես ձագ ծիծեռնակ պիտի (11), բունս ի ձեր տունըն դընէի,
 Ճովըռայի սրտիդ վրայ և ծոցուդ խաղող քաղէի:

Ես երիտասարդ, դուն երիտասարդ, սիրուելու ատենն է հիմայ,
 Մէջքդ նման է աղեղի, քանի քաշեմ՝ դէպ ինձի կուգայ,
 Ծիծերդ նման են խաղողի որ կուրծքիդ վրայ են բուսեր,
 Ո՛ւր էր որ ծիծեռնակի ձագ ծ'ըլլայի, բոյնս քու տունդ դնէի,
 Սրտիդ վրայ ճովըռայի ու ծոցեդ խաղող քաղէի:

◆◆◆

Քուչակեան տաղիկներու հետեւեալ փոքրիկ շարքը մեր աշխատակից տօքթ. Յ
 Տէր Ղազարեան հին ձեռագիր տաղարանէ մը (թուականը անձանօթ) օրինակելով մեզի
 ղրկած է:

(5) Ձեռ. ո՛ւ կ'երթաս:

(6) Ձեռ. քո ծոցդ տիրանամ:

(7) Այս տաղիկին մէկ փոփոխակը՝ քիչ տարբերութեամբ հրատարակուած է Նախ. ԳՈՒՀԱԿԻ դիւանին մէջ. հոն՝ քառեակին կցուած կան երեք տող եւ որ նոյնիմաստ են, բայց հաւանօրէն մաս կը կազմեն ուրիշ քառեակի մը որուն մէկ տողը կը պակսի:

(8) Ձեռ. Սորվելու:

(9) Ձեռ. գուգայ:

(10) Ձեռ. ու առեր: Այս տաղիկին առաջին երեք տողերը մաս կը կազմեն քառեակի

մը զոր հրատարակած եմ՝ Ս. Ղազարու թի՛ւ 160 ձեռագրէն քաղելով՝ «Անահիտ»ի թ. տարուան հոկտ. դեկտեմբերի թիւին մէջ. հոն քառեակը ամբողջ է, եւ չորրորդ տողն է՝ «Քո ծոցդ առաւօտ նըման, քանի յետ բանամ նա լուսնայ»: Վերջին երկու տողերուն՝ որ Տէվէ-ճեանի օրինակին մէջ աւելցուած են այս տաղիկին (եւ նախորդ երեք տողերուն յարմարող ձեւով մը կցուած են անոր) առաջինը մաս կը կազմէ եօթ տողով տաղիկի մը զոր հրատարակած եմ Նախ. ԳՈՒՀԱԿԻ դիւանին մէջ (էջ 73, ճԾ):

(11) Ձեռ. պիտի:

ՀԱՅՐԵՆԻՔ ՍԻՐՈՅ ԵՒ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ

Թուխ աչք 'ւ իմ կամար ունեք, խորովեցիր դու զիս, խորովեցիր (12).
Սպիտակ ծոցեր ո՛վ տեսեր (13), ժուռ ծըծեր որ դեռ չէ հասեր (14).
Ե՛կ, իմ խակ ու ժուռ ծըծեր որ նազով մայրն է արնուցեր (15),
Ձատ ալլ ի ծոցս եմ պահեր, քո արեւն ալլ մարդ չէ տեսեր:

Թուխ աչքերով ու կամար յօնքերով իմ աղուորս, դուն խորովեցիր զիս, խորովեցիր.
Ո՛վ է տեսեր ծոց մ'այսքան ձերմակ, ժուռ ծիծեր որ դեռ հասած չեն.
Եկու՛ր, խակ ու ժուռ ծիծերով աղջիկ զոր մայրդ նազով է սնուցեր.
Ատոնք ալ իմ ծոցս եմ պահեր, քու արեւդ ուրիշ մարդ չէ տեսեր:

Առանց խոց, առանց եարայ զիս տեղիկս հիւանդ է ձգքեր,
Հարցունք (16) մէկ ընդ իս եղէք, որ ասեմ՝ Սեւ աչքն է արեր,
Էնօք սեւ աչքն է արեր, իւր ծոցուն մահրում է հաներ (17):

Առանց խոցի, առանց վերքի, զիս անկողնիս մէջ հիւանդ է ձգքեր.
Անգամ մ'իւնծի հարցուցէք, որ ըսեմ՝ Սեւաչուն է ըրեր.
Անով է այս բանն ըրեր՝ որ ծոցէն զիս զուրկ է ձգքեր:



Հատիկ մի մերձան լինի ես ի քո վզնոցն ելնէի,
Կամ սիրուն աղունք լինի (18) քո լօհիդ մէջըն լոյս տայի (19),
Կամ պաղ աղբիւր ջուր լինի քո հէրանց պաղչան մտնէի (20),
Կուժն առնիր ի ջուրն գայիր՝ քո կըժիդ մէջըն լցւէի:
Վեր կալնիր ու թեւիդ գնիր, ես ի քո ծոցըդ թափէի (21),
Գլորի ի մէջ ծըծերուդ, քո ճերմակ ծոցըդ թանայի (22):

(12) Ձեռ. «խորուցիր»:

(13) Ձեռ. «վեր սպիտակ ծոցեր ո՛վ տեսեր»:

(14) Ձեռ. «ժուռ ծըծեր որ դեռ չէր տեսեր կամ խօսեր» (աղաւաղեալ տող). հաւանորէն ասոր տեղ պէտք է ըլլար՝ «որ դեռ չէր հասեր»:

(15) Ձեռ. «սնուցի»:

(16) Ձեռ. «զարցունք»:

(17) Այս եռատողէն յետոյ կայ հետեւեալ տողը՝ «Այլում ալլելում կ'ասեմ, ես չեմ ե»:

կեր քո սէրն է բերեր», որ ուրիշ քառեակի մը տողն ըլլալու է՝ հոս մտած:

(18) Ձեռ. «լինէի»:

(19) Լօճ, արաբերէն՝ փայտ, կ'ենթադրենք որ պէտք է նշանակէ փայտէ տփիկ, զոհարատուփ:

(20) Ձեռ. «մտնի»:

(21) Ձեռ. «թափէի»:

(22) Ձեռ. «բանայի»:

Բուստի հատիկ ծ'ըլլայի ու քու վզնոցդ ելլէի,
 Կամ սիրուն գոհար ծ'ըլլայի ու տուփիդ ձէջ լոյս տայի.
 Կամ պաղ աղբիւրի ջուր ըլլայի, հօրենական պարտէզդ ծանէի,
 Կուժն առնէիր ջուրի գայիր, քու կուժիդ ձէջ լեցուէի,
 Վերցնէիր կուժն ու թելիդ դնէիր, ես քու ծոցդ թափէի,
 Ծիծերուդ ձէջ զլորէի, ձերձակ ծոցդ թրջէի:

Քուչակեան տաղիկներու հետեւեալ երկու ընդարձակ շտրքերը քաղած ենք ձեռագիր տաղարանէ մը շոտրագիր, թուականն անձանօթ, հաւանօրէն 17րդ դար) եւ որուն այդ թերթերուն լուսանկարչական արտատպութիւնը հաճեցաւ մեզի դրկել մեր ազնիւ աշխատակիցը տօքթ. Յ. Տէր Ղազարեան:

ՀԱՅՐԵՆԻՔ ՍԻՐՈՅ ՎԵՐԱՅ, ԱՍԱՅԵԱԼ Ի ԱՇԼԽՆԵՐՈՒՆ (23)

Երբ որ ես պզտիկ էի, կանչէին ինձ ոսկի տղայ,
 Մեծցայ սիրու տէր եղայ, երեսիս գոյնըն կու գընայ.
 Մանկըտիք (24), ձեր արեւն ասեմ, որ սիրուն քարըն չըդիմնայ.
 Սիրուն քար 'ւ երկաթ պիտի պողպատէ գոնակն ի վերայ:

Երբոր պզտիկ էի ես, զիս ոսկի տղայ կը կանչէին,
 Մեծցայ սիրոյ տէր եղայ, երեսիս գոյնն ահա կ'երթայ.
 Տղաք, արեւուդ ձեռնիձ, քարն իսկ սիրոյ չի դիմանար,
 Սիրոյ դէժ՝ քար ու երկաթ պէտք է ու պողպատէ դուռ մ'ալ վրայէն:



Մանուկ ես նորա կ'ասեմ որ առնու դըպլինքն ու բանայ,
 Բանայ ու պաղչան մ'տնու, վարդ քաղէ որ ցօղն ի վերայ,
 Առնու ու տաստայ անէ լուք տանի եարին նաւալայ:

Երիտասարդ ես անոր կ'ըսեմ որ կ'առնէ բանալին ու կը բանայ,
 Կը բանայ պարտէզն ու կը ծտնէ, վարդ կը քաղէ՝ ցօղը վրան,
 Կ'առնէ ու փունջ կը կապէ ու եարին նուէր կը տանի:

(23) «Հայրենք» = «հայրէն» ներ իմաստով:

(24) Զեռագրին մէջ՝ Մանկտիք մանկտիք.



Ա՛յ իմ՝ ճերմակ ծոց բազայ, ճերմակ ծոց ու ծիծն (*) ի վերայ,
Քո բոյնն (25) ի դիմար քարին, արծըւին (26) ահիկն ի վերայ,
Երթամ (27) աղաչեմ՝ զԱստուած որ արծիւն շուտ վերանայ,
Ճերմակ ծոցն ի յիս դառնայ, չարն երթայ (28) շրլիցն ի վերայ:

Ա՛յ իմ ճերմակ ծոց բազէս, ճերմակ ծոց ու ծինը վրան,
Քու բոյնդ անմատոյց ժայռին վրայ է, և արծուին ահն է վրան.
Երթամ աղաչեմ Աստուծոյ, որ արծիւն շուտ անհետանայ,
Ճերմակ ծոցն ինծի դառնայ, չարը՝ վիզն հողին՝ երթայ կորսուի:

Աւա՛ղ ու հաղար բերան, խելօք էի անխելացայ,
Քան (29) ըզկաթն յստակ (30) էի, քան զգարնան ջուր պղտորեցայ,
Քան դառպալ ի ծալն էի, նայ տըկուկ տըկուկ քակվեցայ (31),
Քան զմարգըրիս (32) ի շարն էի, չմաժան՝ փողոց թափեցայ:

Աւա՛ղ, հաղար անգամ աւա՛ղ, խելացի էի և անխելեցայ,
Կաթէն աւելի ծաքուր էի, գարնան ջուրէ աւելի պղտոր դարձայ.
Ոսկեհուռ դիպակի պէս ծալուած էի, ծալք առ ծալք քակուեցայ.
Մարդրտի պէս շարուած էի, անարժէք բանի մը պէս փողոց թափուեցայ:



Լուսին, դու լուսով կացիր, թէ կենաս պահիկ մի հուսայ,
Երկու խօսք գանգատ ունիմ, զայն ասեմ, լուր ալվի գընայ.
Գընա՛յ 'ւ իմ՝ եարուն ասա՛յ թէ՛ նստեր երգիւնքն (33) ու կուլայ,
Կուլայ 'ւ ողորմուկ կուլայ, աչերուն արիւն կուլ ցողայ:

Լուսի՛ն, լուսով միշտ մնաս, եթէ պահիկ մը հոս կենաս.
Երկու խօսք գանգատ ունիմ, ըսեմ, լսէ ու յետոյ գնա.
Գնա՛ իմ եարիս ըսէ՛ թէ՛ նստեր է երգիւքն ու կուլայ,
Կուլայ ու ողորմուկ կուլայ, աչքերէն արցունք կը ցողայ:

(*) ցին, խալ. grain de beauté:

(25) Ձեռ. բուն:

(26) Ձեռ. Արծուին.

(27) Ձեռ. երգամ:

(28) Ձեռ. երգայ:

(29) Ձեռ. քար:

(30) Ձեռ. ըստակ:

(31) Ձեռ. քակվերայ:

(32) Ձեռ. զմարգարի:

(33) Ձեռ. երթինքն:



Երբ ես ի թօխաթ մ'ըտայ (34), բարակ մէջք կողալ մի տեսայ,
 Ճամբեկս մահանայ արի, կանչեցի «տարպե'կ մի» հորա,
 Այօք երաց թէ Գընա'յ... (35)
 Գընա' լ իրիկունն եկօ ոտքն ի խաղ որ մարդ չիմանայ,
 Հանչաք գիրիկ ու ծոց անենք պագ հաղար մինչ որ լուսանայ:

Եկո'յ քեզ ի ծոցս առնում, տեղ շինեմ կրծոցքս վերայ (36),
 Ծոցքս քեզ սեղան քաշեմ, ծիծըս բարձ' երեսդ ի վերայ,
 Կոճկիկըս թուլկեկ կոճկեմ որ հոգիդ ի ծոցիկս ելնայ:

Ես թօքաթ մտայ, բարակ մէջքով աղուոր ճը տեսայ,
 Ճամբաս պատրուակ բռնեցի ու անոր «ճամբայ ճը ցոյց տո'ւր» կանչեցի. (*).
 Եջքով նշան բրաւ թէ' Գնա',
 Գնա' ու իրիկունն եկուր, անձայն քայլերով, որ մարդ չիմանայ,
 Գրկուինք ու հաղար համբոյր տանք իրարու, ծինել որ լուսնայ:

Եկուր, քեզ ծոցս առնեմ, քեզի կուրծքիս վրայ անկողին շինեմ,
 Ծոցքս քեզի սեղան յարդարեմ, ծիծըս բարձ' երեսդ վրան,
 Կոճկիկներս ալ թոյլ կոճկեմ, որ հոգիդ ծոցիս մէջ աւանդես:



Մանկան հոգին դու կ'առնուս, լոկ Գըրօղն (37) եղեր մահանայ,
 Զալում ես քեզի' կ'առնեմ, քո հօրըն տընալն երեբայ,
 Խաթ աչք, ես ըզքեզ սիրեմ, թող ալամս ամէնն իմանայ,
 Թող զիս ի վըրադ մորթեմ, հենց հաշուեմ թէ օր մի չեղայ:

(*) Տարպեկ, տարպ արար բառէն կը թուի սերիլ. որ կը նշանակէ ֆամբայ:

(34) Ձեռագրին մէջ հոս կայ նաեւ կամ
 Թէ քիլիս բառերը, զոր օրինակողն իր կողմէ
 աւելցուցած ըլլալու է:

(35) Տողը կիսաւարտ է, ձեռագրէն օրի-
 նակողն ինքն իսկ կախման կէտերը դրած է:

(36) Այս եւ յաջորդ երեք տողերը կը
 թուին առանձին տաղիկ մը ըլլալ որուն մէկ
 տողը կը պակսի:

(37) Գրօղ/կրօղ, արեւմտահայ հնչումով/
 հոգէառ ոգի, մահուան հրեշտակ:

երիտասարդին հոգին դո՛ւն կ'առնես, Գրողը պատրուակ է լով.
Անգութ ես քեզի՛ կ'ըսեմ, հօրդ սուներ թող շարժքէն ցնցուի.
Խածաչուի՛, ես քեզ կը սիրեմ, թող աշխարհ ամբողջ խմանայ,
Թող զիս քու վրայ ծորթեմ ու հաշուեմ թէ օր ծ'իակ չապրեցայ:

Գիշերս ի ես դուրս ելայ. դարսայ կօղ ու բարկ լուսունկայ.
Կօզալ մ'այլ ի դէմս ելաւ, քրաւնած ու բաղնեկւայ.
Էրի թէ բռնեմ՝ պագնեմ, նայ բոլորն երթար զալապայ.
Պէջան ալ ի վեր իկալ, թուխ ունօքն արաւ թէ Գընա՛յ.
Գընա՛յ 'ւ իրիկունն եկօ, հաւն ի քուն, որ մարդս չիմանա

Այս գիշեր ես դուրս ելայ. սեւաչուի վառ լուսնկայ ճը կար.
Աղուոր մ'ալ դէմս ելաւ, բաղնիքէն նոր ելած ու քրտնած.
Ձանացի զայն բռնել ու պագնել, բայց բազմութիւն կար անոր շուրջ.
Լաչակը վեր առաւ, թուխ աչքովը նշան ըրաւ թէ՛ «Գնա՛,
Գնա՛, ու իրիկունն եկուր, երբ աքլորը քնացած է, որ ճարդս չիմանայ»:



Եկին ու խապար բերին թէ քո եարն եղաւ յաբեղայ (38),
Փըշարմացքն զիս առաւ, թ'աճապ ո՞նց եղաւ յաբեղայ.
Բերնակն էր շաքրի սովոր, թ'աճապ ո՞նց կերաւ նա բակլայ.
Անձն էր քթան շապկի սովոր, թ'աճապ ո՞նց հագաւ նա վալայ (*):

Եկան ու լուր բերին ինծի թէ քու եարդ եղաւ արեղայ,
Ձարմանքէս փուշ փուշ եղայ, թէ ինչպէ՞ս ան եղաւ արեղայ.
Բերանը շաքարի էր սովոր, ի՞նչպէս հիմայ կ'ուտէ բակլայ.
Մարծինը քթան շապկի էր սովոր, ինչպէս հիմայ քուրձ կը հագնի:



(*) վալայ, վեղար ? քուրձ ?

[38] Այս քառեակը՝ քանի մը բառի տարբերութեամբ հրատարակած ենք արդէն «Անահիտ»-ի մէջ (1907 թիւ 10-11-12) քուչակեան տաղիկներու շարքի մը հետ զոր քաղած ենք Ս. Ղազարու թ. 1330 եւ 323 ձեռագրերէն: Տօքթ. Տէր Ղազարեանի ձեռագրին մէջ վերջին տողը սապէս է՝ «Անձն էր քթան շապկի

սովոր, թ'աճապ ոնց կերաւ նա բակլայ» (օրինակողը սխալմամբ նախորդ տողի վերջին մասը կրկնած է հոս). Ս. Ղազարու ձեռագրին մէջ՝ «Անձնիկն էր շապկի սովոր, աճապ ոնց հագաւ նա վալայ», միւս տարբերութիւնները՝ աննշան:

Գիշերս ես ի գուրս ելայ, մութ գիշեր, չըկայ (39) լուսունկայ,
 Բռնեմ զայս բարակ ճամբեկս ու երթամ մինչ որ լուսանայ,
 Շատ գեղ շատ քաղաք անցայ, այս գիւղին գէմքն կապեցայ
 Կ շէն ու բոլոր մ'լնայ, թի'նչ (40) աղէկ կօղակ կու կենայ:

Այս գիշեր ես գուրս ելայ, մութ գիշեր, չկայ լուսնկայ,
 Բռնեմ սա բարակ ճամբան ու երթամ մինչեւ որ լուսնայ,
 Շատ գիւղ շատ քաղաք անցայ, այս գիւղին գէմքն կապուեցայ,
 Թող այս գիւղը ճնայ շէն ու լի, քանի որ այնքան ընտիր աղուոր ճը կայ հոն:

★

Զմարդըն սիրու տէր կ'անեն ու կուտան ճամբիան թէ Գընա՛յ,
 Հաց մի պաշարիկ կուտան, ո՛չ երկու պագիկ նուաղայ (41):

Մարդը սիրոյ տէր կ'ընեն ու ճամբու կը դենն որ երթայ,
 Հաց ճը կուտան իբր պաշար, բայց ո՛չ երկու համբոյր իբր նուէր:

★

Գիշերս ես ի գուրս ելայ ի վերի թաղըն նայեցայ,
 Զարտա՛ն մ'ապիկի տեսայ, իմ՝ եարիկն ի հոն կու խաղայ,
 Զըգիտեմ թէ սիրե՞մ ըզնա թէ թողում՝ որ այլ մեծ անայ,
 Երթամ ու հեռուն կանգնիմ ու պահեմ զաչերս ի վերայ,
 Մէկ ծոյլ գայ թէ տէր կանգնիմ, նա թափեմ՝ զարիւնս (42) ի վերայ:

Այս գիշեր ես գուրս ելայ, վերի թաղը նայեցայ,
 Տեսայ տանիք ճը բերեղէ, ու եարիկս հոն կը խաղայ,
 Ձեռ գլտեր թէ սիրե՞մ զայն թէ թողում որ դեռ ձեռնայ,
 Երթամ ու հեռուն կենամ ու աչքերս վրան պահեմ,
 Եթէ ապուշ ճը գայ անոր տէր կանգնելու, արիւնս անոր վրայ թափեմ:

★

Գիշերս ես ի գուրս ելայ, թուխ ամպերն անուշ կու ցողայ,
 Ղարիպ սիրու տէր մանուկս գուռնէ գուռ անկեր կու գողայ,
 Հարսնուկ մի Աստուծոյ սիրուն գիր կողպած գուռըն կու բանայ,
 «Եկո՛յ գքեզ ի ծոցս անուամ՝ մինչեւ որ սրտիկդ հալանայ (43),
 Արի՛ ու հնցիուն գընայ որ ծոցուս տէրըն չիմանայ,
 Մահիկըզ գանկով կ'անէ, արիւնովդ ըզճեռն լըւանայ:

(39) Ձեռ. չագայ:

(40) Ձեռագրին մէջ՝ Թինչ /ինչպէս եւ
 թաճապ՝ փոխանակ Թ'աճապի, կաննն փո-
 խանակ կ'անեսի/:

(41) Այս քառեակին երկու տողը կը պակ-

սի:

(42) Ձեռ. պարիւնս:

(43) Ձեռ. Թինչ որ սրտիկըզ... տաղաչա-
 փութեան համեմատ՝ պէտք է որ բնագիրն
 ըլլար մինչեւ որ սրտիկը հոլմանայ (3—5):

Այս գիշեր ես դուրս ելայ, թուխ աճպերէն անուշ ցօղ կ'իջնէ.
 Սիրաճար պանդուխտ երկոտասարդ ձը դռնէ դուռ ինկած կը դողայ:
 Հարսնուկ ձը Աստուծոյ սիրոյն իր կղզուած դուռը կը բանայ,
 «Եկուր քեզ ծոցս առնեն՝ ձինչեւ որ սրտիկդ գովանայ,
 Այնպէս եկուր ու զնա որ ծոցիս տէրը չիմանայ,
 Դանակով քեզ կը ձեռքնէ, արկնով ձեռքը կը լուայ:»



Դու ինձ պարծենցիր 'ւ ասիր թէ ճերմակ ծոցըս (44) քեզ ծառայ,
 Դարձար փոշիման (45) եղար չըկեցար ըսրարիդ վերայ.
 Ինձ դժուար ու ղրայ (46) կուգայ քո ծոցուդ այլ մարդ տիրանայ,
 Պագնէ զիմ պագած տեղիքն (47) ու դնէ զերեսն ի վերայ:



Բամպակ հաւաքողներ. — Նկար Վահրամ Գայֆէճեանի

Դուն ինձի պարծենցար ու ըսիր թէ ճերմակ ծոցս քեզի ծառայ,
 Յետոյ դարձար զլջացիր ու խոտածանդ վրայ չկեցար.
 Ինձի դժուար կուգայ որ ուրիշ մարդ քո ծոցիդ տիրանայ,
 Պագնէ իմ պագած տեղերս ու զնէ երեսը վրան:



Ելար գընացիր, հագե'կ, ու չասիր դու բարով մ'ընայ,
 Ես իմ հօր որդի չլինիմ թէ թողում որ այս քեզ մ'ընայ (48),
 Ջարկնեմ արծաթէ դանակ ու քաշեմ ի ճկուղ վերայ,
 Ելնէ այդ կարմիր արիւնդ քո ճերմակ ծոցըդ լըւանայ (49):

(44) Ձեռ. ծոցիս:

(45) Ձեռ. շոշման եղեար:

(46) Ձեռ. ուղերայ, պէտք է ըլլայ՝ ու
 ղրայ /ղրայ արարերէն՝ նախամն/:

(47) Ձեռ. տեղիկն:

(48) Ձեռ. քեզ նմայ:

(49) Ձեռ. լուլանայ:

Ելար ու գացիր, հոգեակ, ու ճնատ բարով չըսիր,
 ես ի՞նչ հօրս որդին չըլլամ եթէ թողուն որ աս քեզի ճնայ,
 Արծաթէ դանակը քաշեմ ու ձկնեմ քու լեարդիդ ձէջ,
 ելլէ այդ կարծիր արխնդ ու ձերձակ ծոցդ լուանայ,

★

Աշունք էր եղեւ գարուն, ու քանի՜ խրմ'ենք մ'ենք ի տուն,
 եկէք որ իջնումք պաղչան լուկ խրմ'ենք հետ պլտուլներուն,
 Մըտիկ մանուշկին արէք որ բուսեր ի հետ թըփերուն,
 Գըլուխն ի յառջին կախեր՝ քրտնէր երեսն ամօթսն:



Հայ գեղջկուհի — Նկար Վահրամ
 Գալֆէճեանի

Աշուն էր գարուն եղաւ, ա՛լ ինչո՞ւ ձենք տան ձէջ խճենք.
 եկէք պարտէզը իջնենք ու սոխակներուն հետ խճենք.
 Մանուշակին նայեցէք որ թուփերուն տակ է բուսեր,
 Գլուխն առջեւն է կախեր ու երեսն ամօթէն կարծրեր:

★

Հառչեմ հառաչ կուգայ ի սրտէս ու լերդէս (50) արիւն.
 Հառաչս որ երկինքն ելնէ հա երկնուց կուգայ ամպով ձիւն (51).
 Ո՛վ տեսեր այսպէս ֆիղան (52), որ կուգայ սիրու տէր մարդուն.
 Գիտեմ թէ ինձ մէն կուգայ, հա կուգայ հաւսար ամէնուն:
 Ով որ միամիտ լինի, կու փրկի յամէն չարերուն:

Երբ հառաչեմ՝ սրտէս հառաչ կուգայ ու լերդէս արիւն,
 Հառաչս երբ երկինք ելէ, երկինքէն կուգայ ամպով ձիւն.
 Ո՛վ է տեսեր այսպիսի ցաւ որ կուգայ սիրոյ տէր ծարդուն.
 Ես կը կարծեմ թէ ինձի ձիւն կուգայ, բայց ան ամենուն ալ կուգայ.
 Ով որ զխրափստո՜ւ է, կը փրկուի ամէն չարիքէ:



Այս ծով ու անհուն գիշերս ես ի ձեր երգիքն եմ եկեր,
 Գլխակ ալ ի վայր դրեր, հա անոյշ քունըն զիս տարեր.
 Սլեներն ի գերանն ասեն՝ «Սիրոյ տէրն երգիքն է եկեր (53).»
 Մանկտիք, ձեր արեւն (54) ասեմ, ես փայտէ դամազ չեմ տեսեր.
 Չոր փայտն ի մորին բուսեր՝ խամղութիւն ուսկից է ուսեր:

Ելս ծովու պէս անհուն գիշերուն ձէջ՝ ես ձեր երգիքն եմ եկեր,
 Գլխիս ալ վար եմ դրեր, ու անուշ քունն է զիս տարեր.
 Սլեները կ'ըսեն գերանին՝ «Սիրահար ձը երգիքն է եկեր»:
 Տղա՛ք, արեւուդ ձեռնիմ, ես փայտէ լրտես չէի տեսեր,
 Չոր փայտն անտառն է բուսեր, լրտեսութիւնն:



Այս ծով ու անհուն գիշերս ես ի ձեր դռնակն եմ եկեր,
 Դռնակն ալ ի փակ տեսեր՝ փոշիման ի յետ եմ դարձեր:
 — Էրնեկն՝ յարեւուդ վերայ՝ դուն ի մեր դուռն չես եկեր,
 Մեր դուռն երբ գալու էիր, ցորեկով ինձ է՛ր չիր ասեր.
 Ոսոքս ես ի գէմ ելեր (55), երեսօք ըզդուռն բացեր,
 Թեւիկ ի շըլիգ՝ ձըգեր պագնելէն ի տուն ի տարեր:

(50) Ձեռ. լերդէս:

(51) Ձեռ. հա երկնուցն կուգայ ամպովն ձիւն:

(52) Ձեռ. ո՛վ տեսեր էր այսպէս ֆիղան,

(Եր վանկը աւելորդ է, եւ ետքէն մտցուած):

(53) Ձեռ. երկինքն է եկեր:

(54) Ձեռ. արեւ:

(55) Ձեռ. ելար:

Այս ծովու պէս անհուն զիշերուան ձէջ եւ ձեր դուռն եմ եկեր,
 Դուռն ալ փակ եմ տեսեր ու զղջալով ետ եմ դարձեր:
 — Երանի՜ թէ, արեւոյ սիրեմ, դուն ձեր դուռն եկած չըլլայիր.
 Եթէ ձեր դուռը դալ կ'ուզէիր, ինչո՞ւ ցորեկով չըսիր,
 Ոտքովս դէձոյ ելլէի, բայց երեսով դուռը բանալի,
 Թեւս քու վզիդ ձգէի, պագնելով քեզ տուն տանէի:



Քո սէրդ ի սրտիս միջին հանց մըտել զերդ սսկի բեւեռ,
 Գնացեր ի սրտիս ի մէջն ու ու փառչին արեր կեռ ու մեռ.
 Երբ դու հետ ինձ սէր չունիր, է՛ր չասիր ի յառջի օրէն.
 Հանց զաւլով իխրար արիր թէ Սիրէ, Տէրն ըզքեզ պահէ.
 Հիմի դուն ի դատ եկար, պէկումման զքեզ ո՞վ տեսեր է:
 Կ'ասես դու ի քո մըտին թէ կ'երթայ մէկ մ'այլ կու սիրէ:

Քու սէրդ իմ սրտիս ձէջ ձտեր է ինչպէս գամ ձը սսկի,
 Մխրճուեր է սրտիս խորն ու զայն պատառ պատառ է ըրեր:
 Եթէ դուն ինձի համար սէր չունէիր, ինչո՞ւ չըսիր առջի օրէն.
 Այնպէս հաստատ խոստում ըրիր ինձի, թէ՛ Սիրէ՛, Տէրը քեզ թող պահէ.
 Հիմայ դուն հեռացար ինձէ՛, առանց յոյսի քեզ ո՞վ կրնայ տեսնել.
 Քու ծաքիդ ձէջ դուն կ'ըսես թէ՛ Լն կ'երթայ ուրիշ ձը կը սիրէ:

(Շարունակելի)